ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/172

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.11.2018թ. թիվ 26-3/20464-18 գրությամբ «Զիգզագ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 07.11.2018թ. թիվ ԴԴ-3-Ե-9017 գրության հիման վրա, 09.11.2018թ. թիվ 26-3/20464-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Զիգզագ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Զիգզագ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Զիգզագ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Զիգզագ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ դատական դեպարտամենտի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/47» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.10.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն որոշվել է ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2018թ. հոկտեմբերի 30-ը ներառյալ, ներկայացնել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (հրավերի 2 մասի 3 կետով սահմանված փաստաթղթերը):

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.11.2018թ.տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Զիգզագ» ՍՊԸ-ն ներկայացրել է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, սակայն արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ «Զիգզագ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում է էներգիայի առավելագույն սպառման մասին տեղեկատվությունը:

Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետը հանձնաժողովը որոշել է հաջորդ նիստը հրավիրել 2018թ. նոյեմբերի 7-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.11.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «Զիգզագ» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, քանզի ներկայացված փաստաթղթերում էներգիայի

առավելագույն սպառման մասին տեղեկատվությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «Զիգզագ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 47-րդ կետի (այսուհետ նաև՝ Կարգ) համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից

տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Զիգզագ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/47» ծածկագրով գնման ընթացակարգին, որի 3-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրով Ընթացակարգի հրավերով սահմանվել է հետևյալ պահանջը՝ էներգիայի առավելագույն սպառում՝ 65 Վտ:

«Զիգզագ» ՍՊԸ-ն 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը առաջարկել է ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /հրավերի 2 մասի 3 կետով սահմանված փաստաթղթերը/:

«Զիգզագ» ՍՊԸ-ն ներկայացրել է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, սակայն գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ «Զիգզագ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայել է էներգիայի առավելագույն սպառման մասին տեղեկատվությունը: Հիմք ընդունելով վերոնշված հանգամանքը՝ գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանը տրվել է շտկելու հնարավորություն:

Ընկերության կողմից առաջարկված Panasonic TX-32FSR500 մոդելի հեռուստացույցի պաշտոնական շահագործման ձեռնարկում (կցվում է) բացակայել է որևէ տեղեկատվություն՝ էներգիայի առավելագույն սպառման վերաբերյալ, այդ իսկ պատճառով առաջին փուլով ներկայացված թիվ 6,1 հավելվածով չի ներկայացվել նշված չափանիշի վերաբերյալ տեղեկատվությունը:

Այնուհետև ստանալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ծանուցումը առ այն, որ հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ «Զիգզագ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում է էներգիայի առավելագույն սպառման մասին տեղեկատվությունը, և պահանջը շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ «Զիգզագ» ՍՊԸ-ն 3-րդ չափաբաժնի մասով սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված թիվ 6.1 հավելվածը: Մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից առաջարկված Panasonic TX-32FSR500 մոդելի հեռուստացույցի պաշտոնական շահագործման ձեռնարկում բացակայել է էներգիայի առավելագույն սպառման վերաբերյալ տվյալը, և նշված ձեռնարկում այս պարամետրի մասով առկա է եղել էներգիայի առավելագույն սպառում՝ 65 Վտ-ի համադրելի տվյալ, այն է՝ номинальное энергопотребление 69 Вт, ուստի «Զիգզագ» ՍՊԸ-ի կողմից է շտկված թիվ 6.1 հավելվածով ներկայացվել է պահանջված պարամետրի հետ համադրելի այլ տվյալ, այն է՝ номинальное энергопотребление 69 Вт:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, չփորձելով ուսումնասիրել Ընկերության կողմից ներկայացված համադրելի տվյալի համապատասխանությունը Ընթացակարգի հրավերի պահանջներին, առանց համապատասխան մասնագիտական եզրակացության, 07.11.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետով կայացրած որոշմամբ արձանագրել է, որ «Զիգզագ» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, քանզի ըստ գնահատող հանձնաժողովի՝ ներկայացված փաստաթղթերում էներգիայի առավելագույն սպառման մասին տեղեկատվությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին և Ընկերության հայտը մերժվել է:

Ընկերությունը հայտնել է, որ «Զիգզագ» ՍՊԸ-ի կողմից շտկվել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը, այն է՝ «Զիգզագ» ՍՊԸ-ի կողմից է շտկված թիվ 6.1 հավելվածով ներկայացվել է Ընթացակարգի հրավերով պահանջված պարամետրի հետ համադրելի տվյալ, այն է՝ номинальное энергопотребление 69 Вт:

Ի հավաստումն վերոհիշյալի՝ ներկայացվել է համապատասխան փորձաքննության արդյունքում ստացված փորձագիտական եզրակացությունը, ինչի շրջանակներում իրականացվել է Ընկերության կողմից առաջարկված Panasonic TX-32FSR500 մոդելի հեռուստացույցների աշխատելու ընթացքում էներգիայի առավելագույն սպառման չափագրումը: Մասնավորապես, «Ալիք-Էներգո» ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացությամբ (կցվում է) արձանագրվել է հետևյալը. ««Ալիք-Էներգո» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է Ձեր կողմից ներկայացված TX-32FSR500 մոդելի հեռուստացույցների աշխատելու ընթացքում էներգիայի առավելագույն սպառման չափագրում: Չափագրման արդյունքում հեռուստացույցների օգտագործված էներգիայի հզորությունը, էներգիայի առավելագույն սպառումը կազմել է 55 Վտ: Կից ներկայացնում ենք չափագրման ընթացքում օգտագործված չափիչ սարքերի վկայականները ստուգաչափման մասին՝ տրված «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից:

Վերոհիշյալ եզրակացությունը ևս մեկ անգամ ապացուցում է, որ «Զիգզագ» ՍՊԸ-ի կողմից շտկվել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը, այն է՝ «Զիգզագ» ՍՊԸ-ի կողմից շտկված թիվ 6.1 հավելվածով ներկայացվել է Ընթացակարգի հրավերով պահանջված պարամետրի հետ համադրելի տվյալ, այն է՝ номинальное энергопотребление 69 Вт, ինչի պայմաններում Ընկերության կողմից առաջարկված Panasonic TX-32FSR500 մոդելի հեռուստացույցների աշխատելու ընթացքում էներգիայի առավելագույն սպառումը չի գերազանցում Ընթացակարգի հրավերով պահանջված առավելագույն 65 Վտ:

Ընկերությունը գտնում է, որ անհիմն է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.11.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետով կայացրած որոշումը առ այն, որ «Զիգզագ» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընկերությունը գտնում է, որ «Զիգզագ» ՍՊԸ-ն «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/47» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կատարել է ստանձնած պարտավորությունները, և Կարգի 48-րդ կետով սահմանված կարգով և ժամկետներում շտնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Ընկերությունը հայտնել է, որ նույն փաստական հանգամանքների և նմանատիպ փորձագիտական եզրակացության պայմաններում Գնումների հետ կապված բողոքը քննող անձի (ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի) կողմից կայացվել են որոշումներ առ այն, որ մասնակիցը թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինս չի ներառվել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» (որոշումներ թիվ ՍՑ-ԷՍ-2018/61, ՍՑ-ԳԲԽ-22/17):

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները՝ «Զիգզագ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/172 ընթացակարգի շրջանակներում 14.11.2018թ. ժամը 10:40-ին և 19.11.2018թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ դատական դեպարտամենտը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.11.2018թ. թիվ ԴԴ-3-Ե-9017 գրությամբ ներկայացրել է «Զիգզագ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/172 ընթացակարգի շրջանակներում 14.11.2018թ. ժամը 10:40-ին և 19.11.2018թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 19.11.2018թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/172 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/172 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար կենցաղային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/47» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Զիգզագ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.10.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Զիգզագ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով, որին ծանուցվել է սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.11.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Զիգզագ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի նկարագրի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովն արձանագրել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում է էներգիայի առավելագույն սպառման մասին տեղեկատվությունը: Ընկերությանը ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.11.2018թ. ժամը 12:00-ի նիստի 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Զիգզագ» ՍՊԸ-ի հայտ մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, քանզի ներկայացված փաստաթղթերում էներգիայի առավելագույն սպառման մասին տեղեկատվությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.11.2018թ. թիվ 26-3/20464-18 գրությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 07.11.2018թ. թիվ ԴԴ-3-Ե-9017 գրությունը և կից փաստաթղթերը, «Զիգզագ» ՍՊԸ-ի դիրքորոշումը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն

ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ,

այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար կենցաղային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/47» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով 3-րդ չափաբաժնի մասով նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

3	Հեռուստացույցներ	Անկյունագիծ՝ 32", Էկրանի ֆորմատ՝ 16:9, Կետայնություն առնվազն՝ 1366x768, Smart TV-ի հնարավորությամբ, Հաճախականություն՝ 600 Hz, Ձայնի հզորություն՝ 20 Վտ, Թվային հեռուստատեսության ընդունիչ՝ DVB-T, DVB-T2, DVB-C Անալոգային հեռուստատեսության ընդունիչ՝ PAL/SECAM, Wi-Fi-ի հնարավորությամբ, Հեռակառավարման համակարգ՝ ամբողջական, Հեռակառավարման տեսակ՝ Ինֆրակարմիր HDMI մուտք, USB, Էներգիայի առավելագույն սպառում՝ 65 Վտ, Տակդիր՝ կոմպլեկտում Ամրացում պատին՝ լրացուցիչ (VESA 200) Գույն՝ սև Չափեր (ԲxԼxԽ)՝ 433-470x733-738x69-210 մմ: Չափեր (առանց տակդիրի)՝ 433-438x733-738x69-74 մմ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Զիգզագ» ՍՊԸ-ն, որը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/47» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/47» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.10.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Զիգզագ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով, որին ծանուցվել է սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

«Զիգզագ» ՍՊԸ-ի կողմից հայտի թիվ 6.1 հավելվածով ներկայացվել է Պանասոնիկ Քրփորեյշն կազմակերպության արտադրության «Panasonic TX-32FSR500» ապրանքային նշանի առաջարկվող հեռուստացույցների ամբողջական նկարագիրը, որի մեջ չի նշվել հեռուստացույցների «էներգիայի առավելագույն սպառում» ցուցանիշը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.11.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Զիգզագ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի նկարագրի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովն արձանագրել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում է էներգիայի առավելագույն սպառման մասին տեղեկատվությունը: Ընկերությանը ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին ներկայացվել է ապրանքի տեխնիկական բնութագրի շտկված տարբերակը, որում «էներգիայի նոմինալ սպառում» ցուցանիշը նշվել է 69 Վտ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.11.2018թ. ժամը 12:00-ի նիստի 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Զիգզագ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, քանզի ներկայացված փաստաթղթերում էներգիայի

առավելագույն սպառման մասին տեղեկատվությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Միևնույն ժամանակ «Զիգզագ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «Ալիք-Էներգո» ՍՊԸ-ի կողմից 23.11.2018թ. տրված թիվ 216 գրությունը, համաձայն որի վերջինս կատարել է «Panasonic TX-32FSR500» թվով 3 հատ հեռուստացույցների աշխատելու ընթացքում էներգիայի առավելագույն սպառման չափագրում: Չափագրման արդյունքում հեռուստացույցների օգտագործված էներգիայի հզորությունը, էներգիայի առավելագույն սպառումը կազմել է 55Վտ:

Նույն գրությանը կից ներկայացվել է չափագրման ընթացքում օգտագործված չափիչ սարքերի վկայականները ստուգաչափման մասին՝ տրված «Չափագիտության Ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից:

Այսպիսով՝ «Զիգզագ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող «Panasonic TX-32FSR500» մոդելի հեռուստացույցի «էներգիայի նոմինալ սպառում» ցուցանիշը նշվել է 69 Վտ, մինչդեռ հրավերով պահանջվել է առավելագույնը 65 Վտ, այն դեպքում, երբ Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Դրա հետ մեկտեղ Ընկերությունը ներկայացրել է նույն «Panasonic TX-32FSR500» մոդելի հեռուստացույցների աշխատելու ընթացքում էներգիայի առավելագույն սպառման չափագրման վերաբերյալ «Ալիք-Էներգո» ՍՊԸ-ի կողմից 23.11.2018թ. տրված թիվ 216 գրությունը, համաձայն որի նշված ապրանքի էներգիայի առավելագույն սպառումը կազմել է 55 Վտ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ուսումնասիրելով «Զիգզագ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, ինչպես նաև հաշվի առնելով «Ալիք-Էներգո» ՍՊԸ-ի կողմից 23.11.2018թ. տրված թիվ 216 գրությունը, գտնում եմ, որ նման առկա չեն բավարար հիմքեր «Զիգզագ» ՍՊԸ-ի կողմից «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/47» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման փաստն արձանագրելու համար: Ուստի գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.11.2018թ. թիվ 26-3/20464-18 գրությամբ «Զիգզագ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02500164) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**